13.09.24 - 13.09.24
16:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Ս.թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 16:00-ին, Երևանի պետական համալսարանում տեղի կունենա նոր ուսումնական տարվա մեկնարկին և առաջինկուրսեցիների ընդունելությանը նվիրված «Հնարավորությունների տոնավաճառ» միջոցառումը, որի ընթացքում ԵՊՀ արտաուսումնական ստորաբաժանումներն առաջինկուրսեցիներին կպատմեն իրենց գործունեության և իրականացվող ծրագրերի մասին։

Միջոցառման շրջանակում կներկայացվեն համալսարանական կյանքը (լրացուցիչ կրթական հնարավորություններ, ուսանողներին տրամադրվող զեղչեր, ներքին հաղորդակցություն, միջազգային համագործակցություն, տեղեկատվական համակարգեր, մշակութային կյանք, կարիերայի հնարավորություններ և այլն) և ենթակառուցվածքների գործունեությունը։

Միջոցառմանը ներկայացված կլինեն հետևյալ ստորաբաժանումները՝

- Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն,
- Ուսումնամեթոդական վարչություն,
- Ֆինանսական վերլուծությունների վարչություն,
- Գիտական քաղաքականության վարչություն,
- Ընդհանուր բաժին,
- Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան,

- Միջազգային համագործակցության վարչություն,
- Շրջանավարտների և կարիերայի կենտրոն,
- Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,
- Շարունակական կրթության կենտրոն,
- Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարան,
- Մարքեթինգի բաժին,
- Ուսանողական գիտական ընկերություն,
- Ուսանողական խորհուրդ,
- Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն,
- Բյուրականի ուսումնաարտադրական բազա։

«Հնարավորությունների տոնավաճառ» միջոցառման նպատակն է ուսանողներին ծանոթացնել համալսարանի ընձեռած արտաուսումնական բազմաթիվ հնարավորություններին և օգնել նրանց ստանալու իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները։ Սա բացառիկ հնարավորություն է՝ հանդիպելու և շփվելու համակուրսեցիների ու այլ ուսանողների, դասախոսների և համալսարանական անձնակազմի հետ։

Միջոցառմանը համերգային ծրագրով հանդես կգա «YSU Band»-ը։

Միացե՛ք միջոցառմանը, և եկեք միասին ազդարարենք առաջինկուրսեցիների ուսումնական ճամփորդության սկիզբը։

Սիրով սպասում ենք բոլորիդ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am